Հաստատում եմ
Ախթալայի N 1 մ/դ
տնօրեն՝ ______________ (Լ. [illegible])
(ստորագրություն)
13.09.2023թ.

Ուսումնական հաստատության

Դասղեկական աշխատանքային
Տարեկան ծրագիր
Ախթալայի N1 միջնակարգ դպրոց
6–րդ դասարան
2023-2024ուստարի
Դասղեկ՝ Ա. Ղալայան

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները:
Դասարանի ընդհանուր բնութագիրը:
6–րդ դասարանում սովորում են 10 աշակերտ՝ 4 տղա և 6 աղջիկ: Ձևավորված է առողջ կոլեկտիվ, նկատվում է նրանց միջև մտերմություն, ակտիվություն , աշխուժություն: Նկատվում է ընկերական համերաշխ հարաբերություններ: Միմյանց նկատմամբ հոգատար են, հարգալից: Երեխաները սիրով են հաճախում դպրոց, ենթարկվում են դպրոցի կարգ ու կանոնին, գիտեն դպրոցում և դասարանում իրենց պահելու ձևը, հարգում են մեծերին, սիրում են հայրենիքը:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:
Դասարանում աշակերտներին շարքերով նստեցնել՝ հաշվի առնելով նրանց հասակը, տեսողությունը և լսողությունը: Ամենօրյա հսկողություն սահմանել աշակերտների հաճախումների վրա: Հասնել նրան, որ դասարանում իսպառ վերացվեն անհարգելի բացակայությունները և ուշացումները: Կազմել դասարանի ամենօրյա հերթապահություն, ունենալ դասարանի ավագ և օգնական:

Զարգացնել ճանաչողական հետաքրքրություն, տրամաբանական մտածողության ձգտում, ուշադրություն, հիշողություն, երևակայություն, որոշումներ կայացնելու և եզրահանգման կարողություն: Սերմանել ընդունելի վարքի և էկոլոգիայի մշակույթի տարրեր, արթնացնել բարության և փոխօգնության զգացում, բնությունը պահպանելու ցանկություն, նրա նկատմամբ խնամք տածելու, խնայելու ձգտում:

1. **Հայեցի դաստիարակություն**- Կազմակերպել զրույցներ, միջոռացումներ հայկական տոների, սովորույթների մասին, տանել բացատրական աշխատանքներ:

2. **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**-Անցկացնել զրույցներ Հայաստանի անցյալի, հայ ժողովրդի համառ պայքարի ու սխրանքների մասին, ծանոթացնել հայ ազատամարտիկների հերոսական կյանքին, պատմել հայոց բանակի կազմավորման և կարևորության մասին:

3. **Գեղագիտական դաստիարակություն**-Դաստիարակել գեղեցիկը տեսնելու, զգալու, ընկալելու ունակությունը,այն վերածել կարողության, ապա հմտության: Ուշադրություն դարձնել անձնական հիգիենային, պահանջել, որ լինեն կոկիկ, գեղեցիկ սանրված, հագուստը մաքուր, եղունգները կտրած, ձեռքերը միշտ մաքուր: Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ (նպատակը՝ ճանաչել բնությունը, միջավայրում ճիշտ պահվածք դրսևորել) :

4. **Ֆիզիկական դաստիարակություն**-Ճիշտ կեցվածքի ձևավորման համար հարկավոր է զբաղվել լսպորտով, առավոտյան կատարել մարմնամարզական վարժություններ: Հաճախակի կազմակերպել սպորտային միջոցառումներ, մրցույթներ:
5. **Աշխատանքային դաստիարակություն**-Մարդն իր նպատակին հասնելու համար պետք է աշխատասեր լինի, քանի որ ծուլությամբ ոչնչի չես հասնի: Յուրաքանչյուր բարիք աշխատանքի արդյունք է, հետևաբար նրանց մեջ պետք է սերմանել աշխատասիրություն:

6. **Բնապահպանական դաստիարակություն**-Կազմակերպել էքսկուրսիաներ տարվա տարբեր եղանակներին, ծանոթացնել բնության զարմանահրաշ երևույթներին: Բնությունը մաքրում է օդը, մեզ բերք ու բարիք է տալիս, ուստի այնպետք է պահել ու պահպանել:

7.Դպրոց-ընտանիք կապ- Կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, նրանց ներգրավել երեխաների ուսման և առաջադիմության գործընթացին: Զրուցել հետևյալ թեմաներով՝«Ճանաչու՞մ ես արդյոք քո երեխային», «Ու՞նի քո երեխան ինքնուրույնություն»: Կարևորագույն խնդիր համարել դպրոց – ընտանիք կապի պահպանությունը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

N	Բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարող/ներ/
1	Ծանոթություն աշակերտների հետ	1 շաբաթ	Դասղեկ աշակերտներ
2	Զրույց «Ծանոթացում դպրոցի կարգ ու կանոնին»	2 շաբաթ	Դասղեկ աշակ.
3	Զրույց «Իմ օրվա ռեժիմը»:	3 շաբաթ	Դաս, աշակ.
4	Իմ հայրենիքը ՀՀ–ն է.Մեր բանակը	4 շաբաթ	Դաս, աշակ.
5	Զրույց.«Ինչպես պաշտպանվել վարակից»/պաշտպանել հիգիենայի կանոնները	5 շաբաթ	Դաս, աշակ.

	կապված կորոնավիրուսային հիվանդ. հետ/:		
6	Զրույց.«Ինչ եմ ուզում դառնալ»	6 շաբաթ	Դաս, աշակ.
7	Զրույց «Տարվա եղանակները»: Նկարել տարվա սիրելի եղանակը:	7 շաբաթ	Դաս, աշակ.
8	Երեխաներին ծանոթացնել մեր ազգային տոներին	8 շաբաթ	Դաս, աշակ.
9	Աշունը իմ քաղաքում	9 շաբաթ	Դաս, աշակ.
10	Զրույց Որտեղ եմ ես ապրում, որն է իմ հայրենիքը, իմ քաղաքը	10 շաբաթ	Դաս, աշակ.
11	Մանկական աստվածաշունչ/մուլտֆիլմի դիտում/	11 շաբաթ	Դաս, աշակ.
12	«Ձմե՛ռ, ինչ գեղեցիկ ես դու»:Նկարել ձմեռային իմ սիրելի խաղերը, տեսարանները:	12 շաբաթ	Դաս, աշակ.
13	Ի՞նչ եմ ուզում Ձմեռ պապիկից: Ձմեռ պապիկին նամակագրություն/նկարների տեսքով/:	13 շաբաթ	Դաս, աշակ.
14	Ամանորյա միջոցառման նախապատրաստություն	14 շաբաթ	Դաս, աշակ.
15	Հայրենասիրական դաստ. «Հայ հերոսներ»	15 շաբաթ	Դաս,աշակ.
16	Ծանոթություն հայ ազգային մշակույթին	16 շաբաթ	Դաս,աշակ.
17	Հետևել խոսքի կուլտուրային , զրույց վարվեցողության կանոնների մասին. ա) մեծերին դիմել <<Դուք>>-ով բ) օգտագործել <<Խնդրում եմ>>,<<Կարելի՞ է>>, <<Շնորհակալություն>>, <<Կներեք>> բառերը:	17 շաբաթ	Դաս, աշակ.
18	Հեքիաթի ընթերցում	18 շաբաթ	Դաս, աշակ.
19	Ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ, մարդասիրություն և կարեկցանք տարեցների նկատմամբ:	19 շաբաթ	Դաս, աշակ.
20 21	Զրույց . <<Ես սիրեցի դպրոցը: Ուզում եմ լավ սովորել>>: Սեր արթնացնել դեպի ուսումն ու գիտելիքը:	20 շաբաթ	Դաս, աշակ.
22	<<Կենդանիները մարդկանց բարեկամներն են>> զրույց նրանց մասին, կարդալ կենդանիների ու մարդկանց բարեկամության մսին պատմություններ:	21 շաբաթ	Դաս, աշակ
23	Զրույց.<< Սիրենք մայրենի լեզուն>>:	22 շաբաթ	Դաս, աշակ.
24	Հեքիաթի ընթերցում	23 շաբաթ	Դաս աշակ.
25	Զրույց. <<Երեխաները մոլորակի հարստությունն են>>:	24 շաբաթ	Դաս, աշակ.
26	Զրույց. <<Ի՞նչ ենք հասկանում առողջ ապրելակերպ ասելով: Ի՞նչ անենք, որ առողջ լինենք>>:	26 շաբաթ	Դաս, աշակ.
27	Գեղեցիկն իմ պատկերացմամբ	27 շաբաթ	Դաս, աշակ.
28	<<Իմ սիրելի էակն աշխարհում>>. զրույց մայրերի մասին: Երգ մոր մասին:	28 շաբաթ	Դաս, աշակ.
29	<<Իմ սիրելի մուլտֆիլմը կամ հեքիաթի հերոսը>>: Հակադրել բարին ու չարը: Գովերգել բարուն, պարսավել չարին:	29շաբաթ	Դաս, աշակ.
30 31	Ինչպես եմ պլանավորել ամառային արձակուրդները Բույսերի խնամքը	30-31 շաբաթ	Դաս աշակ.

32 33–34	Տարեվերջյան զրույց. <<Իմ առաջադիմությունը և վարքը>>: Էքսկուրսիա դեպի բնություն	32-33-34 շաբաթ	Դասղեկ աշակ.